

ԽՈՐԳԻԱՆ

Եղանակ հայոց ժողով
Հայոց պատմութեան
Հայոց ազգական աշխարհ
Հայոց ազգական աշխարհ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ
ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՂԵՌԱԿԱ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԾՐԱԳԻՐԸ

07
4-6.4

ՀԿ(Բ)ԿԿԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
«ԽՈՐԴՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

ԵՐԵՎԱՆ 1986



07
4-6
67

23 JUN 2009

Արքագրիչ՝ Ա. Դ ա յ ա ն

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՈՒՍԼԻՑՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1008
38423

20

12

39

30

Ընկ. Ստալինի ճառը՝ կադրերի հռդատար
դաստիարակության մասին, տեխնիկան տե-
րապետած մարդկանց նկատմամբ ուշադիր վե-
րաբերմունք ունենալու մասին—պետք է մոբի-
լիզացիայի յենթարկի մամուլի բոլոր աշխա-
տողներին՝ բանթղթակիցների ու գյուղթղթա-
կիցների նկատմամբ բացառիկ ուշադրություն
դարձնելու համար:

Միության մեջ մեր կոլտնտեսություննե-
րում խորհրդնականություններում արգեն կես
միլիոնից ավելի բրիգադային պատի թերթ
կա: Յերկու միլիոնից ավելի ակտիվ գյուղ-
թղթակիցներ մասնակցում են մեր կոլտնտե-
սային ստորին մամուլին:

Թղթակցական այդ ստորին կադրերը դատ-
արարակել, նրանց քաղաքական պատրաստու-
թյունն ու լրագրային գրագիտությունը բարձ
րացնել կարելի յէ միայն նրանց մեջ սփստե-
մատիկ աշխատանք կատարելու միջոցով: Ա-
ռաջին հերթին հարկավոր ե զրադվել կոլտնտե-
սային ու բրիգադային պատի թերթերի հա-

Պետհատի տպարան, Յերևան

Հրատ. 3542 Գլավլուս Վ.-127 Պատմեր 1301 Տիրաժ 800

Ժար վորակյալ, գրադետ խմբագիրներ պատրաստելու գործով:

1934-35 ուսումնական տարում շրջանային 800 թերթ Համ Կ(ր)Կ ԿԿ-ի որդան «կրեստյանսկայա գաղետա»-յի հետ միասին կոլտընտեսային ու բրիգադային պատի թերթերի խմբագիրների հեռակա ուսուցում կազմակերպեցին: Դասախոսությունները 75 հազար ընդհանուր տիրածով ուղարկվում եյին բոլոր շրջանային թերթերին: «Կրեստյանսկայա գաղետա»-յի անմիջական հսկողության տակ սովորում երին կոտնտեսային ու բրիգադային պատի թերթերի 28 հազար խմբագիր: Շատ թերթեր այդ դասախոսություններն ոգտագործում եյին կարճատե ուսուցում կազմակերպելու համար:

Հեռակա ուսուուումը մոչ միայն խոր դրական նշանակություն ունեցավ ստորին մատուի կագրեր պատրաստելու, պատի թերթերի խմբագիրների քաղաքական ու լրագրային գրագիտության ռարձողման ոռոժում, այլև նախատեց թերթերի հրատարակման կառավագումնոր. պատի թերթերի բովանդակության քարերակմանը:

1934-35 ուսումնական տարվա հեռակա ուսուցման փոքի հիման մուա և Համ. Կ(ր)Կ Կենտկամի մամուլի ու հրատարակչությունների բաժնի հանձնարարությամբ ու ՀԿ(ր)ԿԿ-ի մորումում «Խորհուրդին Հայաստանը ընթացիկ 1935-36 ուսումնական տարում նա-

խատեսնում ե կազմակերպել կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթերի խմբագիրների հեռակա ուսուցումը: Պարզ ե, վոր կորտնտեսային ու բրիգադային պատի թերթերի խմբագիրների հեռակա ուսուցման կազմակերպումը, վորը նոր գործ ե մեղ մոտ Հայաստանում, պահանջում ե լուրջ նախապատրաստություն:

Այդ նպատակով ստորեվ տպում ենք ուսուցման կազմակերպման ծրագիրը:

«ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի ՀԵՌԱԿԱ ԴԱՍԼԻԹԱՅՑՆԵՐԻ ԱՆԴԻՐՆԵՐԸ

«Խորհրդային Հայաստան»-ի իրեն խնդիր ե զնում սիստեմատիկաբար ու միասնական ծրագրով ուսումնակագրաք ու մամուլի հետ միասին կազմակերպել կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթերի խմբագիրների մասայական պատրաստումը:

«Խորհրդային Հայաստան»-ի հեռակա դասընթացների պուանձնահատկությունն այն ե, վոր նա հեռակա ուսուցումը (դասախոսություն—առաջադրանք կազմելն ու սովորողներին ուղարկելը, շրջանային թերթերի խմբագիրներին մեթոդական նամակներ գրելը) զուգակցում ե շրջանային թերթերին կից յերես առ յերես կոնսույտացիաներ կազմակերպելուն, ուսման նորթը մշակելու գործում սովորողներին ողնելուն ու հեռակայողների ըս-

տուգման աշխատանքները դրախտելուն ո-
ժանդակելուն:

ԴԱՍԼՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Դասընթացների ուսումնական ծրագիրը
կազմված ե այն հաշվով, վոր յուրաքանչյուր
հեռակայող ինքնուրույն կերպով որական յեր-
կու ժամ պետք ե պարապի:

Դասընթացների ծրագրի մեջ են մտնում
հետևյալ առարկաները:

1. Լրագրային աշխատանքի պրակտիկան.
(Բոլշևիկյան մամուլի հիմնական սկզբունք-
ները, կոլտնտեսային մամուլի խնդիրները,
մամուլի մասսայական աշխատանքը, աշխա-
տանքը գյուղթղթակիցների մեջ, պատի թեր-
թի խմբագրումն ու ձևավորման տեխնիկան):

2. Մայրենի լեզու.

3. Մի շաբէ դասախոսություններ գյու-
ղում կուսակցության ընթացիկ քաղաքակա-
նության հարցերի շուրջը:

Միստեմատիկ ուսուցումը կատարվելու յէ
ձմեռվա շրջանում (Հոկտեմբեր — ապրիլ):
Ամառվա շրջանում դասախոսություններ են
ուղարկվելու գյուղատնտեսական ընթացիկ
կամպանիաների շուրջը, որինակ՝ «գարնանա-
ցանը և կուտնտեսային մամուլի խնդիրնե-
րը», «Քաղհանի կամպանիան», «Բերքահա-
վաք» և այլն:

Ուսումնական ծրագրերը կուղարկվեն լրա-
ցուցիչ:

ՀԵՌԱԿԱՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԼՄԱՆ ԿԱՐԳԸ.

Դասընթացներում սովորելու համար պետք
է ընտրվեն բրիգադային և կոլտնտեսային
թերթերի համեմատաբար քաղաքականա-
պես ավելի գրագետ ու կայուն խմբագր-
ները և այն լավագույն ակտիվ թղթակիցնե-
րը, վորոնք հետազում կարող են ոգտա-
գործվել վորակես պատի թերթի խմբագրե-
ներ: Հատուկ ուշադրություն պետք է դարձ-
նել ուսման մեջ դրամելու առաջավոր պրո-
ֆեսիա ունեցող գյուղթղթակիցներին, ինչ-
պիսիք են՝ տրակտորիստները, կոմբայնա-
վարները, մեքենավարները, անասնապահա-
կան ֆերմայի աշխատողները և այլն:

Հեռակայողների ընտրություններ կատարում
ե շրջանային քերթի խմբագիրն անձամբ:

Դասընթացները համալրելիս, պետք է հաշ-
մի առնել, վոր դասընթացների ծրագիրը
կազմված ե այնպիսի սովորողների համար,
վորոնք գյուղական դպրոցի մոտ 4-րդ դասարա-
նի պատրաստություն ունեն: Ունկնդիրների
գրագիտությունը վորոշելու համար բոլոր ըլլ-
զանային թերթերին ստուգման աշխատանք և
ուղարկվում մայրենի լեզվից:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Ուսուցման սիստեմն այն է, վոր ամսական յերկու յերեք անգամ Յերևանից (ըրջանային թերթի միջոցով) ուղարկվում ե ուսման առաջադրանք՝ դասախություն։ 1-2 տպագրական թերթի սահմաններում։ Յուրաքանչյուր առաջադրանքի մեջ տրվում են վորոշակի դասեր և ստուգիչ հարցեր։

Սովորողներին ստուգելու և քննելու (գրախոսելու), սովորելու ընթացքում հեռակայողների մեջ ծագած հարցերը պարզաբանելու և նյութի մշակության ընթացքում նրանց ուժնություն ցույց տալու համար ըրջանային թերթի խմբագրի ղեկավարությամբ հեռակայութների համար ստեղծվում ե մշտական կոնսուլտացիա։

Կոնսուլտացիան տեղի յե ունենում ամսական առնվազն 3 անգամ, 4-ական ուսումնական ժամով։ Յուրաքանչյուր պարապմունքին մշակվում ե յերկու առարկա։ Կոնսուլտանտին ոգնելու համար յուրաքանչյուր ուսումնական առաջադրանքի վերաբերյալ ուղարկվում ե մեթոդական նամակ, վորի մեջ նշված ե լինում թե այս կամ այն առաջադրանքի մասին ինչպիսի կոնսուլտացիա պիտի կիրառել, ինչպես նախապատրաստվել պարապմունքներին, կոնսուլտանտը նախապես ինչ գրականության պիտի ծանոթանա և այլն։

ՈՎ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ ԿՈՆՍՈՒԼՏԱՆՏԸ.

Մայրենի լեզվից վորպես կոնսուլտանտ պետք ե հրավիրել դպրոցի լավագույն դասատուն, վորի աշխատանքը պետք ե վարձատրվի ուսումնական ժամը 3 ուրբի հաշվով։ Լրագրային խնդիրների շուրջը պարապում և ըրջանային թերթի խմբագիրը կամ նրա տեղակալը։

ԿՂՆՍԴԻԼՏԱՆՏԻ ԴԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրջանային թերթին կից ուսումնական կետում հեռակայողներին սովորեցնելու գործում կոնսուլտացիան ամենապատասխանատու մամենտներից մեկն ե։ Կոնսուլտանտը պարտավոր ե ապահովել յուրաքանչյուր սովորողի կողմից հեռակա ուսուցման դասընթացի հաջող յուրացումը։ Նա պետք ե այնպես կազմակերպի գործը, վոր հեռակայողները ինքնուրույն կերպով տանը մշակեն ուսման առաջադրանքները, այդ գործում ամեն տեսակ աջակցություն ցույց տալով նրանց։ Կոնսուլտանտը պետք ե ապահովի հեռակայողի կոնսուլտացիոն պարապմունքին ներկայանալը՝ նախապատրաստված, հերթական առաջադրանքը մշակած և ստուգիչ աշխատանքը կատարած։

Կոնսուլտացիան պետք ե կազմակերպել խմբերով, խմբակները պետք ե կազմակերպել առավելն 25 հոգուց, հաշվի առնեցով յուրա-

քանչյուր հեռակայողի անհատական ընդու-
նակություններն ու պատրաստության մա-
կարդակը:

Պարագմունքները պետք ե տեղի ունենան
սիստեմատիկաբար: Կանոնավոր պարագ-
մունքները հեռակայողին վարժեցնում են տա-
նը սիստեմատիկ աշխատանք կատարելու:

Կոնսուլտացիաների բոլվանդակությունը
պետք ե լինեն-ծրագրի հարցերի պարզաբանու-
մը, նրանց կապակցումը կուսակցության քա-
զաքականության ընթացիկ հարցերի հետ,
տվյալ ժամանակաշրջանի գյուղատնտեսական
կամպանիաների և պատի թերթի ամենորյա-
գործնական աշխատանքի հետ, հեռակայող-
ներին կոնկրետ գործնական առաջադրանքներ
տալու հետ (ոերեք և այլն):

Խորհուրդ ե տրվում հետ մնացող և թույլ
պատրաստություն ունեցող սովորողների հետ
լրացուցիչ պարագմունքներ ունենալ: Դրա
համար դրանց պետք ե կցել դպրոցի դասա-
տուններին: Հեռակայողներին անհատապես
դպրոցի դասատուններին կցելու, Միության
զանազան շրջանների թերթերի անցյալ տար-
վա փորձը, լիովին արդարացրեց իրեն:

Ուսումնական տարվա սկզբին պետք ե
կազմակերպվի հեռակայողների կազմակերպ-
չական ծովովը, վորտեղ պետք ե պարզաբան-
վեն հեռակա ուսուցման խնդիրները, կոնսուլ-
տացիաներ կազմակերպելու մեթոդները: Այդ

ժողովում ընտրվում են խմբակների ավագներ,
հայտարարվում ե պարագմունքների դասա-
ցուցակը և կոնսուլտացիաներին պարտադիր
կերպով հաճախելու հաստատուն կարգ և ուժ-
մանվում:

ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Շրջանային թերթի խմբագրի կողմից նա-
խորոք մշակված դասացուցակի համաձայն
հեռակայողները տասնորյակում մեկ անգամ
հավաքվում են կոնսուլտացիայի, ըստ խըմ-
բակների, նախապես վորոշված վայրում (գըպ-
րոց, խրճիթ-ընթերցարան և այլն):

Խմբակներ կազմակերպելիս պետք ե հաշ-
վի առնել այս կամ այն կոլտնտեսության
հեռավորությունը շրջանային կենտրոնից և
ըստ հեռարափորության ուսուցման կետը մո-
տեցնել հեռակայողներին՝ փնջային պարագ-
մունքներ կազմակերպելու միջոցով:

Վորոշված որը հեռակայողները գալիս են
պարագմունքի, բերում են իրենց հետ գործ-
նական առաջադրանքի պատասխաններն ու
ստուգիչ հարցերը, հանձնում են կոնսուլտան-
տին, վորն ստուգում ե այն, քննում հեռակա-
յողների սխալները, գնահատական տալիս,
նշում թերությունները (այսինքն՝ փաստո-
րեն քննադատում ե ստուգիչ աշխատանքը),
հետ մնացողների հետ անհատական պարագ-

մունք եւ անցկացնում, հաշվառման եւ յենթարկում առաջադիմութունը:

«Լրագրային գործի պրակտիկան» դասընթացի պարապմունքներն անց եւ կացնում շրջանային թերթի խմբագիրը: Յուրաքանչյուր հեռակայող իր հետ բերում ե իր պատի թերթը, վորը փաստորեն նրա հիմնական ստուգիչ աշխատանքն ե հանդիսանում:

Հերթական դասախոսությունը մշակելուն զուգընթաց կոնսուլտանտը քննության և առնում հեռակայողների պատի թերթերը, այսպիսով տեսական պարապմունքը շաղկապում է խմբագիրների՝ իրենց պատի թերթերում կատարած պրակտիկ աշխատանքի հետ: Բացի այդ, հանձնարարվում ե ուսուցման ընթացքում յուրաքանչյուր հեռակայողի համար յերկու-յերեք որ զործնական արտադրական աշխատանք կազմակերպել շրջանային թերթում:

Շրջանային թերթի խմբագիրը պետք ե ամիսը մեկ անգամ «Խորհրդային Հայաստան»-ի բանգյուղթղթակիցների բաժնին մանրամասն տեղեկություն ուղարկի կոնսուլտացիայի ընթացքի, հեռակայողների առաջադիմության, կոնսուլտացիաներին հաճախելու մասին, ինչպես և յերկու ստուգիչ աշխատանք (ամենավատը և ամենալավը) ինչպես մայրենի լեզվից, այնպես և լրագրային գիտելիքների և հեռակայողների այն պատի թերթերը, վորոնք կոնսուլտանտի կողմից ստուգվել են:

Այդ աշխատանքները Յերեանում ստուգում են մեթոդական բյուգոյի կողմից: Հեռակա դասընթացների մեթոդական բյուգոն այդ աշխատանքների մասին մանրամասն քննություններ և մեթոդական խորհուրդներ ե ուղարկում շրջանային թերթի ուսումնական կետի կոնսուլտանտներին:

Մեթոդական բյուգոյի ուղարկած պատասխաններն ու պատի թերթերի տեսությունները պետք ե մանրամասն քննության առնվենում մշակվեն խմբակային կոնսուլտացիաներում:

Ուսուցումն ավարտելուց հետո տեղերում կազմակերպվում ե յերկորյա կոնֆերանս-քննություն:

Շրջանային թերթի խմբագիրը պետք ե նախորդ համապատասխան շենք պատրաստիք (Դպրոց, խրճիթ—ընթերցարան), ապահովությունը կահավորությունը (լույս, գրատախտակ, աթոռներ, սեղաններ և այլն), հեռակայողներին ապահովիթ թղթով, թանաքով և գրիչով:

«Խորհրդային Հայաստան»-ի պատ. Խմբագիր՝
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանգյուղթղթակիցների բաժնի վարիչ՝
Մ. ՄԱՐՏԻԿԱՆ



ՀՀ Ազգային գրադարան



NL0139196

14843